

պը «մի թոյլ մամուլիւմ է ըստ ֆիլի «դաժնորի»
ընդած է մա տաճկահայ կեանքը պատկերացմել,
բայց չէ յաջողած, ամուղիակ ըլլալով ամոռն
կեանքէն ու սովորութիւններէն:


«Յոմանք»-ը եւս (տպ. 1901) ստորա մատոր մը
կը կարգէ և կու գայ հայ ընթերցողի մը ընկերի՝
այնքնիւր հայրենի մշակարար, լեռնիք, լճերը՝
որոնք կը շտայլէ աշ իր մամուլամասն ճկարաւ
գրութիւնքը:

«Յոմանք»-ը տպ. 1894 կու գամ պատմիչու իր
խկ կեանքը, բայց ափսոս որ մա չկարողացաւ
1860էն սատիմ ամցմիլ¹:

Այս յիշեալ հատորներէն զատ Պոռչիանց թո-
ղած է մեզ Աշտի թատրերգութիւն (սպասած)
հատոր և ուրիշ մի քանի փոքր վէպեր, ինչպէս
«Եւս» «Միւրէլ աղենց արգելիք» «Միւրգլի», «Մեք
Խլոմ»:

Եւ այսօր երբ այս դէմքը միշտ 70 տարեկան
հասակին² կը հետամայ մեզմէ վշտացած և զառ-
մացած իր կեանքին հանգամանքներէն՝ իր հո-
գին կը թողու հայ զրաւանութեան պատմութեան
մէջ:

Հ. Մ. ՊՈՏՈՒՆՅԱՆ



ԵՐԿՈՒ ԵՂԱՍՅՐ ԳԵՏԵՐԸ

(Զրոյց Ապենմիմեան Քալմանցոյ)

Շատ գեղեցիկ ու պարզօրեանք լի յա-
նաստեղծութիւն մ'է երկու եղբայր գետերու
աւանդապիւր: Ասիկայ ծնունդ առած է բարձր
Ապենմիմեան Քալմանցոյ մէջ, և որչափ ժո-
ղովորդ որ կայ Չեկոյ և թարսոյի հովիտ-
ներուն մէջ՝ կ'երգեն գայն ու կը յիշեն:

Փեննա յերան ստորոտը՝ 1789 մեկը
բարձրօրեանք կը բոլի Չեկոյ և թարսոյ
գետերուն հասարակաց ակը: Հացիւ հողին
դարս կ'երկեն՝ չորերը կը բաժնուին երկու
տարբեր բնակարաններու, երկու գանգաւն ձո-
րեով, միեւնն որ՝ յիսուն մընի չափ վա-
զեղէ յետոյ իրարուն կը հանդիպին և կը
միանան, միեւնն իւր իրենց հոսանքին չո-
րերը թարսոյ անուամբ շարունակելով, թա-
րսոյ չորերը կը սահին ապաստանու և ինչ
ծործարե մը՝ փրատակներէ և ուերներէ աղ-

բատ, ու կ'իշեն յիւրի և յորի, խոշոր որ-
ձարարերուն մէջէն, որ ինկած են յետերեկ-
նեղ գետափը: Չեկոյի չորերը արագ, վճիտ
և հեշտ կը հոսին՝ յայն և կանաչաւետ ձորի
մը մէջէն, որ շրջապատուած է անտառնե-
րով, գեղեցիկ դաշտերով և այգիներով:

Երկու հովիտներու ոգին տարբեր է,
կարծես տեղական գետին մտանաւոր յատ-
կութիւնները կը զգայ տն. և տոռոգի, թա-
րսոյի հովիտին մարդիկ՝ մտքով քիչ մ'ան-
հուկ, կապաւորու և սատիկ շահախնդիր են.
Իսկ Չեկոյի հովիտին յանկիւնները շատ ան-
կեղծ, պատրաստակար և մեծանն են:

Այսպէսպէս կը պատուէ:

*
**

Փայլակներով և որոտմամբ լի գիշեր
մը, մինչ մայրիններ կը հեծէին հովին
ազդեցութեան տակ, ամպածրար լերան
ստորոտը՝ բղխեցան երկու վճիտ աղբիւր-
ներ:

Մի և նոյն հողէն դուրս ելան անոնք,
և բղիւծած ատեն մի և նոյն խոխովմամբ
ծփծփացին մամուռներու և սէզներու մէջ:
Երբ զով ու պայծառ այգը լուսաւորեց
լեռը, երկու եղբայրները տեսան որ կեան-
քի համար չափազանց նեղ էր ծննդեան
խանձարուբը, և կարգացին իրենց հա-
մար գծուած խորհրդաւոր ճակատագիրը:
Խանձարուբէն հագիւ ելած՝ պէտք էին
իրարմէ բաժնուիլ ու տարբեր ճամբանե-
րով հովիտներէ և ապառաժներէ վար ըն-
թանալ. և գիտէին որ լեռներէն վար, ուր
բլուրները կը ափռուէին դաշտին վրայ,
իրարու պիտի հանգիպէին զարձեւալ, ու
շուրհերը որ այնչափ երկայն ճամբորդու-
թեան պատճառով ջրուած և բաժնուած
պիտի ըլլային՝ մէկ ընթացք ու մէկ խո-
շոր գետ միայն պիտի ձեւացնէին:

«Մեզմէ որուն անունով—հարցուցին ի-
րարու երկու եղբայր գետերը — պիտի կո-
չուի այն ընթացքը՝ որ մեր շուրհերը պի-
տի միացնէ գետով մը»:

Եւ որոշեցին հնչու կէս գիշերին մեկ-
նիլ, երբոր ուսիւր դիտէր լեռնէն. թե-

1. Յարը՝ «Յուշիկներ» ու առաջին մասը միայն լրա-
սարակուած է. յաջորդ մասերը անտիպ կը մնան: «Տես-
նենք, կը վերջացնէ գիրքը, պէտք է յաջողի՝ հետեւեալ
ըրջանները կենդանութեան օրերով լոյս ածելու»:

2. Պ. Պոռչիանց կը վախճանի 1907 Պեկու. 23ին Ռա-
զուի մէջ և կը թաղուի Թիֆլիս, իսթաւմանի գերեզ-
մանաւանդը կը կնռ կողբն:

թեւաշարժ և երազ պիտի վազէին ձորերու զանազան հոռիներէ. և արշալոյսի ծագելուն զիրար պիտի գտնէին հոն՝ ուր երկու ձորերը դաշտով մը կը վերջանան: Եւ առաջ դաշտ հասնողին անուամբ պիտի կոչուէր ջուրերուն ընթացքը մինչև թոյ:

Այսպէս ըսին և որոշեցին երկու եղբայր գետերը:

Ամրողջ օրը վճիտ և հանդարտ խոխուղեցին ակունքն ի վար գորշ խիճերուն մէջէն՝ թարձալից և ցուրտ յուզմունքներով, իրենք իրենց համար պատրաստեւով ճամբորդութեան փոքրիկ անցքը՝ զոր պէտք էին ընել: Իրիկունը՝ երբ մի քանի աստղերը արդէն իսկ կը փափլէին անտառին հիւղերուն մէջէն՝ հանգիստ կերպով քնացան անոնք, կաղնիներու խոշոր և լայն սօսափունին մէջ: Երբ խոր գիշեր էր, բայց դեռ լերան վրայ նորածին լուսնին մահիկ կը շէր արծաթագօծուած, թաքոյ իր զով պարբերակէն կ'իլլէ և անշուկ՝ կը բնայ իր ճամբան մամուռներու միջեւ, և հրաժեշտի յետին հայեացք մը տալով ծնուցիչ լերան՝ լուռ ու մունջ կ'երթայ խիճային ճամբէն:

Երբ լուսնին հանեց իր գլուխը լեռնէն, հացիները՝ աղբիւրին վրայ ծռած՝ յանկարծակի սոսկումով մը ցնցուեցան: Արթնցաւ Չէնոն, և գողտր սրտամորմոքով մ'իլլելով ջուրերուն զով որրանէն, կը կանչէ կրկին ու կրկին թարոյ եղբայրը: Իայց ոչ մի թեթեւ կարկաչ չպատասխանեց. կը մոռնէ՝ նեղցած՝ մամուռներու և քարերու մէջէն և կը գտնէ եղբոր անկողինը՝ պաղ, ամայի և չոր: Այն ատեն յանկարծական տիրութիւն մը կը տիրէ Չէնոյի վճիտ սիրտը և կը հեծկտայ իր խանձարուրդի քարերուն մէջէն՝ իր փրկփրոտ առջի լացով: Խոխուղացող աղբերակին մէջ կ'ուռի, բնիկ նեղ ակիւրէն կը պոռթկայ, և կ'անցնի լեռներու կիրճերէն, երազ՝ արծաթեայ թելի մը նման: Արագ-ընթաց ճամբաներէն, ժայռերէն ցատկելով կ'իջնէ զահալէժ, ոլորտապտոյտ, ձորին կարծր քարերը նեղելով, ու դաշտերն և հերկադուլ արտերը կտրտելով: Եւ յան-

կարծակի կանգ կ'առնէ անակնկալ ժայռի մը դիմաց, ու խաղաղ լճակի մը մէջ հանգչելով՝ մտիկ կ'ընէ թէ արդեօք լեռներու կածաններէն եղբոր ձայնին արձագանքը իրեն կու գայ:

«Ո՛վ ուռիներ, վայրի ուռիներ, և դուք տօգոյն պրտուններ — կը հարցնէ Չէնոյ հոսելով — խոր գիշերին մէջ լսեցի՞ք նորածին գետի մը ձայնը»:

Եւ ուռիներն ու վայրի ուռիներն բեր-լուրիսին կը ծռեն մեղմաբար. «Լսեցինք — կ'ըսեն — գիշեր ատեն, որ հովը կը բերէր ջուրերու հեռաւոր հոսանք մը, ներդաշնակ և խորհրդաւոր պտոյտ մը, իբր թէ մէկը խմէր մթութեան մէջ անօրէն բերանով՝ լայն ու խոր ումպ մը»:

Չէնոն կը յուսայ որ եղբայրը հասնի, ու կ'ուռի սէգ, հնչուն փրփուրներով, և խոյս կու տայ լոկի հովտին խորերը: Վայրկեան մը ջուրերու մէջ կը ցոլանան գուռաթագեղ այգիները՝ բաց-սուտակագոյն զօրաւոր գինիով ակաղձուն, և եզերքներուն վրայ պատատուն մորենիները, ու մթին տնակներ՝ զորս ջրադացք պիտի ընէ, և զղեակներ՝ որ կը քնանան:

Ու կը քալէ, կը քալէ:

Հովիտը, վարը, կը ճեղքուի լայնարար, ու կը բացուի դաշտի լոյսին, ինչպէս երկինքը՝ արեւելեան կողմը՝ արշալոյսի խաղաղ ծագելուն: Լեռներու վերջին թիկունքները կը ծռին զնզաձեւ բլուրներու, երկու ձորերը կը միանան և առաջ կը բերեն մեծ ձոր մը. լերանց կաղնիներուն և շագանակներուն կը յաջորդեն որթերու փաթթումը գեղեցիկ կնձիւները: Կաղաւթախեղու խումբ մը կը խարշափէ գետին թափթիւրով, Չէնոն կը դիտէ և կ'եռագէ: Երբ լերան վերջին թիկունքն ալ յաղթուեցաւ, և երկու ձորերը մէկի վերածուեցան, արդէն գետափին միւս կողմէն՝ կը փայլէր պողպատէ մեծ ու երկայն սուր մը խիճերու մէջէն, հնչելով:

Վերջին ապառաժին դէմ Չէնոն փրկփրոտ արցունքով մը ճեղքուեցաւ, և հասկըցաւ որ ցաւը խանձարուրդէն կ'ընկերէ մեզ երկրիս վրայ:

Հ. Ղ. ՏԱՅԵԱՆ